ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ զբաղեցրած պաշտոնը.

Վահե Ասրյան, ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության տնտեսության ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Փարիզ (Ֆրանսիական Հանրապետություն), 2024 թվականի հոկտեմբեր 13-ից մինչև հոկտեմբեր 18-ը:

3. Հրավիրող կողմը.

Զարգացման ֆրանսիական գործակալություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր բացահայտել փորձն ու ռազմավարությունները, որոնք կարող են հարմարեցվել և կիրառվել Հայաստանում՝ նպաստելու էկոլոգիապես մաքուր հանրային ֆինանսների կառավարմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանաչ բյուջեներին, ինչպես նաև հզորացնել կլիմայական խնդիրները հանրային ֆինանսների մեջ ինտեգրելու ՀՀ կարողությունները:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում, մասնավորապես քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Ֆրանսիական Հանրապետության կողմից պետական բյուջեի մշակման և կատարման ինտեգրումը բնապահպանական չափանիշներին՝ կանաչ բյուջեի միջոցով,
2) Կանաչ բյուջեի ընդունման հիմքում ընկած գործընթացները, մեթոդաբանությունները և օրենսդրական շրջանակները (ներառյալ շրջակա միջավայրի վրա պետական ծախսերի ազդեցության գնահատումը),
3) Բնապահպանական ծախսերի հաշվետվության մեխանիզմները Ֆրանսիայում,
4) Կանաչ պարտատոմսերի թողարկման ֆրանսիական պրակտիկան,

5) Պետական և մասնավոր ներդրողների մոբիլիզացումը կանաչ ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ոսումնական այցի շրջանակներում հանդիպումներ և ելույթներ տեղի չեն ունեցել:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցելության ընթացքում ֆրանսիական փորձին վերաբերվող քննարկված թեմաները հնարավորություն են տալիս գնահատել Հայաստանում կիրառելու հնարավորությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

23 հոկտեմբեր 2024թ

Վահե Ասրյան